«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ

Մասնակից – Գասպարյան Սերյոժա, Ավ.Իսահակյանի անվան հ.16 ա/դ

Ղեկավար - փոխգնդապետ Ա. Իսահակյան

Թեմա - Սովորողների ուսուցման մեթոդներ, մանկավարժական տեխնոլոգիաներ և ՆԶՊ առարկայի կարևորությունը:

ԵՐԵՎԱՆ - 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Սովորողների ուսուցման մեթոդներ 4

Մանկավարժական տեխնոլոգիաներ..... 7

ՆԶՊ առարկայի կարևորությունը..... 17

Եզրակացություն..... 21

Օգտագործված գրականության ցանկ..... 23

Ներածություն

Հետազոտական աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել մանկավարժական տեխնոլոգիաները, սովորողների ուսուցման մեթոդներն ու հնարները և դրանք դիտարկելով ՆԶՊ առարկայի դասավանդման համատեքստում առաջարկել այն մանկավարժական տեխնոլոգիաները, այն մեթոդներն ու հնարները, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն ՆԶՊ առարկայի դասավանդումը հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար կարևոր է գիտակցել, որ գոյություն ունեցող և արդի մանկավարժական ոչ բոլոր տեխնոլոգիաներն են, որ կարող են բարձրացնել դասի արդյունավետությունը: Յուրաքանչյուր առարկա ունի դասվանդման իր նրբությունները և արվեստը: Դասվանադող ուսուցիչը տիրապետելով մանկավարժական տեխնոլոգիաներին պետք է վերլուծական մոտեցում ցուցաբերի դրանց օգտագործմանը: Այսինքն՝ պատկերացնի թե, որ մանկավարժական տեխնոլոգիան է համապատասխան հենց իր առարկայի դասվանադման համար, դասավանդման, ուսուցման որ մեթոդներն ու հնարները կբերեն առարկայի յուրացման որակի բարձրացմանը, իսկ որոնք հակառակ ազդեցությունը կունենա:

Այդ ամենը լավ պատկերացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել առկա մանկավարժական տեխնոլոգիաները, պատկերացում կազմել նրանց մասին, որից հետո ՆԶՊ առարկայի դասավանդման առանձնահատկություններից ելնելով կատարել լավագույն՝ արդյունավետ մանկավարժական հնարների և մեթոդների ընտրություն:

Հանրակրթական դպրոցում «ՆԶՊ» առարկայի դասավանդումը կառուցվում է հիմարար գաղափարների հենքի վրա պարուրաձև սկբունքով:

Առարկայի մեթոդապես ճիշտ դասավանդումը հնարավորություն է ընձեռնում արդյունավետ ապահովելու ներառակայական և միջառարկայական կապերը՝ **նպաստելով** զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմքերի վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը:

Սովորողների ուսուցման մեթոդներ

Ուսուցման մեթոդներ, փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում). կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի, հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Ավանդույթի համաձայն՝ մանկավարժության ուսուցման ՄԵԹՈԴՆԵՐԸ դասակարգվում են 3 խմբի.

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)

2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)

3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Պասսիվ մեթոդ (սխեմա 1), սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի

հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքնե րի, թեստերի միջոցով:

Սխեմա 1. Պասսիվ մեթոդ

Ժամանակ ակից մանկավ արժական տեխնոլոգիան երի և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը: Դասախոսությունը պասսիվ ուսուցման ամենից տարածված ձևն է: Այս մեթոդը լայն տարածում ունի բուհերում, որտեղ սովորում են չափահաս, լիրաժեք ձևավորված անհատներ, որոնք տվյալ առարկան խորությամբ ուսումնասիրելու հստակ նպատակ ունեն:

Ակտիվ մեթոդ (սխեմա 2), սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասսիվ ուսուցման դեպքում

գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին:



Սխեմա 2. Ակտիվ մեթոդ

Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ (սխեմա 3), ինտերակտիվ («Inter» - փոխադարձ, «act»- գործել), նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Սխեմա 3. Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ

Դասավանդողը մշակում է նաև դաս պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում ուսանողը սովորում է նյութը): Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Մանկավարժական տեխնոլոգիաներ

Տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի, վարպետության մասին: Երկար ժամանակ «տեխնոլոգիա» տերմինը մանկավարժության ոլորտից դուրս էր մնում. այն կիրառվում էր միայն տեխնիկական գիտությունների բնագավառում: Չնայած որ այս եզրի տառացի նշանակությունը՝ ուսմունք արվեստի կամ վարպետության մասին, չի հակասում

մանկավարժության խնդիրներին՝ մանկավարժական գործընթացների կանխատեսում, ծրագրում, պլանավորում, նկարագրություն, բացատրություն:

Մանկավարժական տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է կամ էլ որպես նախօրոք պլանավորված, համակարգված և հաջորդական գործընթացի վերարտադրություն և իրականացում:

Մանկավարժական տեխնոլոգիան գիտականորեն ծրագրված և արդյունավետության երաշխիքներ տվող գործողություններ են: Հարկ է նկատի ունենալ, որ «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը նշանակում է ուսուցման և դաստիարակության ոլորտում կիրառվող աշխատանքի ձևերի ամբողջությունը: Ահա այդ պատճառով էլ «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը ավելի լայն և տարողունակ է, քան «ուսուցման տեխնոլոգիա» և «դաստիարակության տեխնոլոգիա» հասկացությունները:

Մանկավարժական տեխնոլոգիաներն ունեն դրսևորման երկու ձև. մի դեպքում դրանք բխում են տեսությունից (Բեսպալկո, Դավիդով, Դյաչենկո, Զանկով, Գալպերին, Կուզմին), մի այլ դեպքում տեխնոլոգիաները սկիզբ են առնում պրակտիկայից (Իլյին, Լիսենկովա, Շատալով, Շեյման):

Ուսուցման տեխնոլոգիացման գաղափարը նոր չէ: Դեռևս Կոմենսկին էր աշխատում ուսուցման տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ: Նա հորդորում էր, որ ուսուցումը դարձնեն մեխանիկական գործընթաց, աշխատում էր գտնել ուսուցման ձևերի այնպիսի հաջորդականություն, որը կապահովեր դրական արդյունք: Կոմենսկին գրում էր. «Դիդակտիկական մեքենայի համար պիտի որոնել և գտնել՝

ա) հստակ նախանշված նպատակներ,

բ) այդ նպատակներին հասնելու հստակ միջոցներ,

գ) որոշակի կայուն կանոններ, թե ինչպե՛ս կարելի է կիրառել այդ միջոցները դրված նպատակներին հասնելու համար»:

Կոմենսկու ժամանակներից մանկավարժության բնագավառում քիչ ջանքեր չեն գործադրվել ուսուցումը անխափան մեխանիզմ դարձնելու ուղղությամբ:

Մակարենկոն իր «Մանկավարժական պոեմում» գրում էր. «Մեր մանկավարժական ստեղծագործությունը երբեք չի կառուցվել տեխնոլոգիական տրամաբանության վրա, այլ միշտ կառուցվել է բարոյական քարոզների հիման վրա»: Այդ է պատճառը, որ Մակարենկոյի կարծիքով, բացակայում են մանկավարժական ստեղծագործության բոլոր կարևոր բաժինները: 20-րդ դարի 60-ական թվականներին են վերագրվում տեխնոլոգիական ուսուցման մասսայականությունը: Սա կապում են սկզբում ամերիկյան, ապա նաև եվրոպական դպրոցի բարեփոխումների հետ: Արտասահմանում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների առավել նշանավոր դեմքերը և հեղինակներն են՝ Ջ. Քերոլը, Բ. Բլումը, Դ. Բրուները, Հ. Հեյսը, Վ. Կոսկարելլին և այլք: Ռուս իրականության մեջ տեխնիկական մոտեցումների հեղինակ են՝ Պ. Յ. Գալպերինը, Ն. Ֆ. Տալիզինան, Յու. Կ. Բաբանսկին, Պ. Մ. Էրդիևը, Վ.Պ. Բեսպալկոն, Մ. Բ. Կլարինը և այլք: Սակայն կան մանկավարժներ և մտածողներ, ովքեր դեմ են մանկավարժական տեխնոլոգիացմանը: Նրանք գտնում են, որ աններելի կամայականություն է մանկավարժական ստեղծագործական և մտերմիկ գործընթացը դիտել որպես տեխնոլոգիա:

Մանկավարժական տեխնոլոգիաները բնութագրվում են մի շարք հատկանիշներով՝

- ուսուցման և դաստիարակության հստակ, հաջորդական մանկավարժական և դիդակտիկական սկզբունքներով մշակված նպատակների առկայություն.

- յուրացման ենթակա նյութի կամ տեղեկատվության կառուցում, խտացում և համակարգում

- դիդակտիկական, տեխնիկական, այդ թվում նաև համակարգչային միջոցների համակարգված կիրառություն ուսուցման և ստուգման գործընթացում.

- ուսուցման և դաստիարակության ախտորոշիչ գործառույթի (ֆունկցիայի) ընդգծում.

- ուսուցման բարձր որակի երաշխիք:

Անհրաժեշտ է տարբերել մանկավարժական տեխնոլոգիաները ուսուցման մեթոդիկայից: Տարբերությունն այն է, որ մանկավարժական տեխնոլոգիաները կարողանում են ուսուցման և դաստիարակության գործընթացը վերարտադրել և

խաղարկել և դրա հետ միասին երաշխավորել ուսումնադաստիրակչական աշխատանքների կամ մանկավարժական խնդիրների լուծման բարձր որակ: Մեթոդիկաները հաճախ այդպիսի որակ չեն ապահովում:

Դրա հետ մեկտեղ մեթոդների ամբողջությունը կարող է վերաճել տեխնոլոգիայի աստիճանի: **Օրինակ՝** գիտելիքի գնահատման որոշակի մեթոդիկա գոյություն ունի: Եթե այս մեթոդիկան համապատասխանում է անաչառության, հուսալիության, համարժեքության սկզբունքներին, ապա կարելի է սա կոչել մանկավարժական տեխնոլոգիա: Մանկավարժական տեխնոլոգիաները փոխկապակցված են մանկավարժական վարպետության հետ: Մանկավարժական տեխնոլոգիաներին կատարելապես տիրապետումն էլ մանկավարժական վարպետությունն է: Նույն տեխնոլոգիան կարող է կիրառվել տարբեր դասավանդողների կողմից, բայց դրա յուրահատուկ անհատական դրսևորումներն էլ հենց մանկավարժական վարպետության մասին են խոսում:

Ուսուցման ավանդական (վերարտադրողական) տեխնոլոգիա



Այս տեխնոլոգիան հիմնված է գիտելիքի, կարողությունների և հմտությունների փոխանցման վրա: Սա ապահովում է սովորողների՝ կրթության բովանդակության յուրացումը, դրա որակի ստուգումը և գնահատումը վերարտադրության մակարդակով: Սա հին ժամանակներից եկող տեխնոլոգիա է, որը դեռ շատ տարածված է այսօրվա դպրոցում, հատկապես միջնակարգ դպրոցում: Այս տեխնոլոգիայի էությունը հետևյալ գծապատկերն է՝ նոր նյութի **ուսուցում - ամրապնդում – ստուգում – գնահատում**: Այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է կրթական պարադիգման, համաձայն որի կարելի է որոշել սովորողի բավարար կեցությունը և գործունեությունն ապահովող անհրաժեշտ գիտելիքի ծավալը և

փոխանցել սովորողին: Ուսուցման հիմնական մեթոդներն են բացատրությունը՝ համակցված իրազննական նյութերով: Սովորողների գործունեության առաջատար ձևերն են լսելը և մտապահելը, իսկ գլխավոր պահանջը և արդյունավետության չափանիշը սովորածի անսխալ վերարտադրությունն է:

Ավանդական տեխնոլոգիան սովորողին դիտում է իբրև վերարտադրողական բնույթի կատարող: Ուսուցչի գործողություններն են բացատրությունը, ցուցադրումը, սովորողի կատարածի գնահատումը և սխալների շտկումը:

Այս տեխնոլոգիան ունի մի շարք կարևոր **առավելություններ**. *սա ժամանակ է տնտեսում, օգնում է, որ սովորողներն արագ հասկանան ուսումնական բարդ նյութը, ապահովում է կրթական-դաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարումը, հնարավոր է դարձնում գիտելիքի հաղորդման նորանոր ձևերի որոնումը*:

Սրանով հանդերձ՝ ավանդական տեխնոլոգիան ունի որոշակի **թերություններ**. *ուսումնական գործընթացի անհատականացման և տարբերակման աննշան հնարավորություններ, սովորողների մտածողական որակների թերզարգացածություն*:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17- րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝

- սոցիալական փոխկախվածության,

- ճանաչողության զարգացման,
- վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության երկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրուների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրուները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի

հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով: Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- դրական փոխկախվածություն.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթաց/ մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի: Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.

- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան առավել ընդունվածը և տարածվածն է: Այս տեխնոլոգիան կյանքի կոչողներից են Վիգոտսկին, Զանկովը, Էլկոնինը, Դավիդովը և այլք: Զարգացնող ուսուցման գաղափարների կայացման հարցում նշանակալից է Վիգոտսկու և նրա երկերի դերը. Վիգոտսկուն է պատկանում մշակութային-պատմական տեսություն կիրառումը մարդու հոգեկանի զարգացման գործում:

Մինչև Վիգոտսկին կարծում էին, թե երեխայի զարգացումը, հատկապես ինտելեկտի կամ մտավոր որակների զարգացումը պայմանավորված է ուսուցման և դաստիարակության գործոնով: Վիգոտսկին ապացուցեց, որ մանկավարժությունը պիտի հիմնվի երեխայի զարգացման ոչ թե անցած, այլ վաղվա՝ եկող օրվա վրա: Միայն այդ դեպքում նա կարող է ուսուցման գործընթացում կյանքի կոչել զարգացման այն գործընթացները, որոնք տվյալ պահին գտնվում են «մոտալուտ զարգացման տարածքում»: «Մոտալուտ զարգացման տարածք» ասելով՝ Վիգոտսկին հասկանում էր, որ զարգացման որոշակի փուլում երեխան, մեծահասակի ղեկավարությամբ և առավել խելացի ընկերների հետ համագործակցելով, կարող է ուսումնական խնդիրներ լուծել: Սակայն մինչև Զանկովի ուսումնասիրությունները Վիգոտսկու գաղափարները պահանջարկ չունեին ուսուցման գործի դիդակտիկայում և պրակտիկայում: Զանկովին հաջողվեց տարրական դպրոցում անցկացված մանկավարժական փորձի հիման վրա ապացուցել, որ կարելի է արագացնել դպրոցականների զարգացումը ուսուցման արդյունավետության բարձրացման շնորհիվ:

Այս գաղափարի իրականացման համար հարկ եղավ մշակելու դիդակտիկական մի շարք սկզբունքներ: Վճռորոշ դեր ստացավ բարդության կամ դժվարության ամենաբարձր աստիճան նախատեսող ուսուցումը, որը բնութագրվում

է նրանով, որ հնարավորություն է տալիս երեխային բացելու իր հոգևոր պահեստային ուժերը, դրանց տալիս է ուղղություն և դրսևորվելու ազատություն: Եթե ուսումնական նյութը և դրա ուսուցման մեթոդներն այնպիսին են, որ դպրոցականի առջև խնդիր չի դրվում հաղթահարելու խոչընդոտները, ապա զարգացումը դանդաղում է: Բարդ կամ դժվար ուսուցում նախատեսող սկզբունքը որոշում է կրթության բովանդակության ընտրությունը և կառուցվածքը: Ուսումնական նյութը դառնում է առավել ընդգրկուն և խորիմաստ, գլխավորը տեսական գիտելիքներն են, սակայն դրա հետ մեկտեղ սովորողների գործնական կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները չեն նսեմանում: Լ. Վ. Զանկովը հաստատում էր, որ ծրագրային նյութն ուսուցանելիս հարկ է արագորեն առաջ գնալ: Անցած նյութի բազմաթիվ, միօրինակ կրկնությունները ուսուցման տեմպը դանդաղեցնում են և վրիպումների պատճառ են դառնում կամ էլ ուսուցման բարձր մակարդակով կազմակերպումը դարձնում են անհնար: Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան ակտիվորեն մշակել են նաև Դ. Բ. Էլկոնինը, Վ. Վ. Դավիդովը և նրանց բազմաթիվ աշակերտները: Էլկոնինը, նկատի ունենալով դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, հիմնեց ուսուցման համակարգված գործունեական մոտեցումը:

Զարգացնող ուսուցման դիդակտիկական գաղափարներից մեկն էլ սովորողների ռեֆլեքսիաների խթանումն է ուսուցման տարբեր գործընթացներում: Ռեֆլեքսիա ասելով՝ մանկավարժները նկատի ունեն սովորողների գիտակցական և իմաստավորված վերաբերմունքը ուսումնական գործունեության ընթացքում դրսևորվող սեփական գործողությունների, միջոցների, եղանակների հանդեպ: Քանի որ ռեֆլեքսիաների խթանման միջոցը սերտ կապի մեջ է ինքնահսկման և ինքնագնահատման հետ, ապա այս տեսակ ուսուցման մեջ սրանք ևս կարևոր դեր ունեն: Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան մեծ արձագանք է գտել ուսուցչության շրջանում: Սակայն այս տեխնոլոգիայի մի քանի դրույթներ վիճահարույց են: Կան երեխաներ, որոնք չեն հաղթահարում դասարանի աշխատանքային տեմպը: Այդ պատճառով էլ արագընթաց և բարդության բարձր մակարդակ նախատեսող ուսուցումը ոչ բոլոր սովորողներին է հասանելի:

Մտածական գործողությունների փուլային ձևավորման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիան մշակված Պ. Ս. Գալպերինի, Դ. Բ. Էլկոնինի, Ն. Ֆ. Տալիզինայի տեսությունների հիման վրա: Այս հեղինակները պարզել են, որ գիտելիքները, կարողությունները և հմտությունները չեն կարող յուրացվել և պահպանվել մարդու գործունեությունից դուրս: Մարդու պրակտիկ գործունեության ընթացքում ձևավարվում է որոշակի դիրքորոշում՝ որպես նպատակին հասնելու պատկերացումների համակարգ, կատարելիք գործողությունների պլանավորում և միջոց: Այսինքն՝ անսխալ գործելու համար մարդը պետք է իմանա, թե ինչ տեղի կունենա, ինչ հայեցակետերի վրա պիտի բևեռի իր ուշադրությունը, որ գլխավորը հսկողությունից դուրս չմնա: Այս դրույթներն էլ կազմում են ուսուցման մտավոր գործողությունների փուլային զարգացման տեխնոլոգիայի հիմքը:

Այս տեսության համաձայն՝ ուսուցման տեխնոլոգիան կառուցվում է գործողություն- ների կատարման այն կողմնորոշման կամ դիրքորոշման հիմնավորմանը համապատաս- խան, որը պիտի յուրացնի աշակերտը: Յուրացման ամբողջական պարբերաշրջանը մի քանի փուլերից է՝

1. 1-ին փուլում տեղի է ունենում սովորողների համապատասխան մոտիվացիայի (շարժառիթի կամ դրդապատճառի) խթանում կամ հասունացում:
2. 2-րդ փուլը կապված է գործողության դիրքորոշման սխեմայի գիտակցման հետ: Սովորողներին նախօրոք ծանոթացնում են գործունեության բնույթին, դրա ընթացքին, պայմաններին և հաջորդականությանը, կատարելիք և վերահսկիչ գործողություններին:

Գործողությունների ընդհանրական մակարդակը, այսինքն՝ դրանց տեղափոխման հնարավորությունը կախված է այդ գործողությունների կողմնորոշման հիմքից: Առանձնացվում են դիրքորոշման երեք տեսակ՝

- որոշակի օրինակ
- ցուցադրում կամ գործողությունների նկարագիր առանց նշելու դրանց իրականացման մեթոդները (կողմնորոշման թերի համակարգ).
- գործողությունների ճշգրիտ կատարման լրիվ և հանգամանալից ցուցումներ.
- սովորողներն իրենք են կազմում իրենց գործողությունների կողմնորոշիչ հիմնավորումը՝ հենվելով նախկինում ձեռք բերած գիտելիքների վրա:

3. 3-րդ փուլում գործողությունների կատարում արտաքին ձևերով՝ ինչ-որ մոդելների, գծապատկերների, գծագրերի օգնությամբ: Այս գործողություններն ունեն ոչ միայն կողմնորոշիչ, այլ նաև կատարողական և հսկիչ ֆունկցիաներ: Այս փուլում սովորողներից պահանջվում է պատմել սեփական գործողությունների և դրանց առանձնահատկու- թյունների մասին:

4. 4-րդ փուլը խոսքային է կամ համակցված է խոսքով, այսինքն՝ սովորողները բարձրաձայն թե՞ նկարագրում և թե՞ կատարում են գործողությունները: Ցուցումների անհրաժեշտություն չի զգացվում, քանի որ սովորողը իր իսկ խոսքով կառավարում է իր գործողությունները:

5. 5-րդ փուլը ներքին խոսքի փուլն է. գործողությունների կատարման հերթականությունը սովորողը որոշում և ասում է մտքում: Պարզվում է, որ ներքին խոսքի ընթացքում գործողությունների ծավալումը և ընդհանրացումն ավելի արագ են կատարվում:

6. 6-րդ փուլը կապված է գործողությունների ներքին (մտավոր) ոլորտ անցումով (գործողությունների կատարման ներքին որակ դառնալը կամ ինտերիորիզացիան):

Ըստ այս տեսության՝ ուսուցման գործընթացի կառավարումը կատարվում է վերոհիշյալ փուլերի հաջորդական անցումներով և ուսուցչի հսկողությամբ: Մտավոր գործողությունների փուլային ձևավորման տեխնոլոգիան ունի թե՞ դրական, թե՞ բացասական կողմեր:

Բոլոր վերը նշված մանկավարժական տեխնոլոգիաները ՆԶՊ առարկայի դասավանդման ընդացքում պետք է ապահովեն՝

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,

- մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձերքբերում և հմտությունների զարգացումը, գիտելիքների յուրացում և ոլորտի տարբեր կողմերի վերաբերյալ ընհանուր պատկերացումների ձևավորում,

- հայրենիքի պաշտպանության գործին անվերապահ պատրաստականության ձևավորում և այլ:

ՆԶՊ առարկայի կարևորությունը

«ՆԶՊ» արարկան հնարավորություն է տալիս ձևավորելու **մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:** Առարկայի դասավանդման ընթացքում շեշտադրվում է երկու հիմնական ուղղվածություն՝

1. Մասնագիտական հիմունքների ուսուցում,
2. Դաստիրակություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակությանը մեր երկրում տարեցտարի ավելի մեծ ուշադրություն է հատկացվում: Կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, որոնց ընթացքում մատաղ սերունդը ծանոթանում է հայրենի պետության պատմությանը, հերոսական անցյալին, մշակույթին, հաղորդակցվում հայրենիքին իրենց կյանքն ու գործունեությունը նվիրաբերած անհատների ոգուն և պատգամներին: Իրավամբ, ուսումնական հաստատություններում այդպիսի ծրագրեր իրականացնելը, դեռ դպրոցական տարիքից տղաների և աղջիկների մեջ հայրենասիրական վեհ գաղափարներ սերմանելը առաջնահերթություն են: Կիրառվում են նոր մոտեցումներ և մեխանիզմներ, սակայն դրանց թվում առաջնային տեղ է զբաղեցնում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը: Տարիներ առաջ առարկան կարծես երկրորդ շունչ առավ՝ վերածվելով պատանիների և աղջիկների ռազմահայրենասիրական դաստիարակության, նախազորակոչային տարիքի տղաներին զինծառայությանը նախապատրաստելու անգնահատելի գործընթացի: ՆԶՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձեւավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլեւ արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաեւ հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձեւավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն,

ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը եւ նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն): Նախնական զինվորական պատրաստությունը ուսումնական պլանով նախատեսված պարտադիր առարկա է, որը անցկացվում է հատուկ կահավորված դասասենյակում՝ օգտագործելով անհրաժեշտ ուսումնադիտողական նյութեր և պարագաներ: «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ՀՀ այլ իրավական ակտերի, ինչպես նաև նախազորակոչային պատրաստության կարգի ու կանոնադրության համաձայն՝ ՀՀ զինված ուժերում ծառայության նախապատրաստելու նպատակով պատանիների շրջանում պետք է ապահովել հետևյալ դրույթների իրականացումը.

ա/ սովորողների կողմից ՆԶՊ առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

բ/ ՀՀ զինված ուժերի խնդիրների, առանձնահատկությունների ու նշանակության իրազեկումը,

գ/ ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության գիտակցումը,

դ/ զինվորական երդման, համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրման և դաստիարակության, դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամության ձեւավորումը,

ե/ զորամասերի զինվորական անձնակազմերի կյանքի, կենցաղի, զենքի ու զինտեխնիկայի հետ ծանոթացումը,

զ/ տեսական և գործնական պարապմունքների միջոցով շարային և կրակային պատրաստության իրականացումը,

է/ անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքների, մարտավարության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերի հիմունքների յուրացումը,

ը/ ռազմակիրառական կարողությունների, կամային բարձր հատկանիշների, առաջին բուժօգնության, ինքնօգնության, փոխօգնության ունակությունների ձեւավորումը,

թ/ քաղաքացիական պաշտպանության ազդանշաններից, պաշտպանական կառույցներից և անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու

ունակությունների, արտակարգ իրավիճակներում գործելու հմտությունների և անհրաժեշտ վարվելակերպի սերմանումը,

ժ/ հայոց բանակի ավանդույթների իմացությունը, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիների և աղջիկների դաստիարակումը,

ի/ մասնագիտական ընտրության աջակցություն՝ ըստ նախասիրությունների:

ՆԶՊ կապված լինելով հանրակրթական շատ առարկաների հետ /պատմություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն/ աշակերտների գիտակցության մեջ խթանվում է տվյալ առարկաների դերն ու կարեւորությունը կյանքում և ռազմական գործում, ինչը նպաստում է նրանց բազմակողմանի զարգացմանը: ՆԶՊ դասավանդումը՝ պարզից բարդին անցնելով, սկզբում վարժաձևերի ճիշտ, բայց դանդաղ կատարմամբ, այնուհետև կանոնադրական պահանջների համապատասխան, այնուհետև գիտելիքների կիրառման փորձառության ձեռքբերումը իրականացվում է հրաձգարաններում և զորամասերում գործնական պարապմունքների ժամանակ: Ավագ դպրոցի յուրաքանչյուր պատանի շրջանավարտ պետք է իրեն նախօրոք պատրաստի այն մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի համար, և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր ու հոգևոր ներուժով, բարոյական վեհ արժանիքներով օժտված անձնավորություն, ունենա անհրաժեշտ ռազմագիտական նվազագույն գիտելիքներ և ունակություններ:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում եկանք այն եզրահանգման, որ ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում նպատակահարմար է կիրառել այնպիսի մանկավարժական տեխնոլոգիաներ, որոնք ակտիվացնում են սովորողների մտածողությունը, դրական մրցակցություն առաջացնում մեծ կամ փոքր խմբերով սովորողների մեջ, ներքին շարժառիթներ ստեղծում գիտելիքի ընկալման, յուրացման, ունակությունների դրսևորման և հմտությունների ձևավորման համար: Կարող են կիրառվել սովորողների ուսուցման այնպիսի մեթոդներ ինչպիսիք են՝ տեղեկացումը, համոզումը, խրախուսումը և ինչու չէ նաև հանդիմանումը: Ցածր դասարաններում անհրաժեշտ է անհատական պատրաստվածության ուշադրություն դարձնել, որոնք արդեն անհատական աշխատանքների շնորհիվ է հնարավոր, իսկ բարձր դասարաններում խմբային-ջոկային պատրաստվածությունը խթանելու համար ավելի շատ խմբային աշխատանքի մեթոդներ և հնարներ է պետք օգտագործել: Ուսուցանվող թեմաները բազմակողմանի մեկնաբանելու, առավելագույնս մատչելի և հետաքրքրաշարժ դարձնելու համար կարևոր է արդեն ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործումը ինչպիսիք են՝ համակարգչային և հեռահաղորդակցության միջոցները, տեսացուցադրման սարքերը և վարժամիջոցները: Վերջիվերջո հիմնականում ավելի արդյունավետ են ներքոհիշյալ մեթոդները.

- Ցուցադրման, պատմողական
- Հարցադրումների, զրույցի
- Վարժանքների, իրադրության խաղարկման
- Խմբային և անհատական ինքնապատրաստման:

Ամփոփելով վերոնշվածը, գալիս ենք այն հանգամանքի, որ «ՆԶՊ» առարկայի ծրագրի և դասավանդման մեթոդները մեծապես համապատասխանում է մանկավարժական գիտության հիմնարար սկզբունքներին՝ օբյեկտիվություն, ուսուցման համակարգվածություն և հաջորդականություն, դիտողականություն և մատչելիություն, գործնական

ուղղվածություն, գիտելիքների յուրացում՝ հմտությունների և կարողությունների ձևավորման ձևով, հասարակական գիտակցության աճ (արժեհամակարգ, ներքին հասարակական դիրքորոշումներ, վարքագիծ), ուսուցանվողների ակտիվություն (ներքի շարժառիթների ձևավորում և ուսուցման խթանում), առարկայի և ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում և մասնագիտական կողմնորոշում:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_60.html ,

2. ՀՀ ԶՈՒ կանոնադրություններ,

3. Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 3-е изд., испр. и доп. - М.: Изд-во УРАО, 2000. - 128 с.,

4. Михайличенко О.В. Методика преподавания общественных дисциплин в высшей школе: учебное пособие. – Сумы: СумДПУ, 2009. – 122 с. ,

5. Краевский В. В., Хуторской А. В. Основы обучения: Дидактика и методика. Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. — М.: Издательский центр «Академия», 2007. — 352 с.,

6. http://www.hayzinvor.am/18464.html, ՆԶՊ զարգացման հիմնահարցեր, հոդված, Ա. ՀԱԿՈԲՅԱՆ,փոխգնդապետ,ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության բաժնի ավագ սպա,

7. ՆԶՊ առարկայի ծրագիր և ՀՊԶ: